| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Վարդենիս համայնքի Այրք բնակավայրի լուսավորության ցանցի անցկացում |
| Մարզ | Գեղարքունիք |
| Համայնքը /համայնքները | Վարդենիս |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | 175կմ, 75կմ |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | Վարդենիս՝ 40030<br><br>Այրք 150 |
| Սահմանամերձ համայնք/բնակավայր | Վարդենիս համայնքի Այրք բնակավայրը սահմանամերձ է: |
| Բարձր լեռնային համայնք /բնակավայրի | Բարձրլեռնային |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, | Վարդենիս համայնքի Այրք բնակավայրը բարձրլեռնային է, սահմանամերձ: Գյուղը ունի դպրոց, բուժկետ, վարչական շենք, նախակրթարան:<br><br>Այրք բնակավայրը գյուղատնտեսական բնակավայր է, բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունը և անասնապահությունն է, որն էլ ապահովում է նրանց եկամտի հիմնական աղբյուրը: 2020 թվականի ապրեսիայից հետո մի քանի տասնյալ տնային տնտեսություններ լքեցին Այրք բնակավայր, բնակություն հաստատելով այլ հարակից բնակավայրերում: Բնակավայրի հարակից բնակավայրերից Վերին և Ներքին Շորժաներում բնակիչները հիմնականում գալիս են ամառվա ընթացքում անասունների պահք իրականացնելու համար: Այրք բնակավայրը տարածաշրջանում հայտնի է իր Սուրբ Աստվածածին (1281 թ.) և Կաթողիկե Սուրբ Գևորգ (13դ.) եկեղեցիներով, որոնց շրջակայքում կան 16-17դդ. բազմաթիվ խաչքարեր:<br><br>Այրք բնակավայրը չունի փողոցային լուսավորություն, բնակիչներ մշտապես բարձրաձայնում են բնակավայրի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների կարևորությունը և անհրաժեշտությունը: Արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ հատկապես երեկոյան ժամերին գրանցվել են դժբախտ պատահարներ՝ անդառնալի |

| | |
|---|---|
| | կորուստներով: Բացի այդ լուսավորված ներբնակավայրային ճանապարհները, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, բարձրացնում են բնակչության անվտանգության մակարդակը, երեկոյան ժամերին երթևեկությունը և մարդկանց տեղաշարժը դառնում է ավելի անվտանգ: |
| Ակնկալվող արդյունքները | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել փողոցային լուսավորության ցանց ընդհանուր մոտ 3845մ երկարությամբ, որտեղ տեղադրվելու են 120 հատ մետաղական հենասյուներ և 120 հատ 50W բարձր որակի ԼԵԴ լամպեր՝ մասնագետների կողմից հաշվի առնելով փողոցային լուսավորության չափանիշները թվային տվյալները կարող են ենթարկվել փոփոխության:<br><br>**Ծրագրի ակնկալվող արդյունքները**<br><br>1. **Անվտանգության մակարդակի բարձրացում**<br>○ Լավ լուսավորված փողոցներն էականորեն նվազեցնում են ճանապարհատրանսպորտային պատահարների և հանցավորության հավանականությունը, ինչպես նաև նպաստում են հետիոտների և վարորդների անվտանգությանը:<br><br>2. **Բնակիչների կենսապայմանների բարելավում**<br>○ Լուսավոր փողոցները բարելավում են բնակչության գիշերային կյանքի որակը՝ հնարավորություն տալով անվտանգ կերպով շրջել գիշերը, օգտվել տարբեր ծառայություններից և հանգիստ զգալ սեփական համայնքում:<br><br>3. **Էներգախնայողություն և կայունություն**<br>○ 50W բարձրորակ LED լամպերի օգտագործումը ապահովում է ցածր էներգասպառում և բարձր արդյունավետություն՝ համեմատաբար ավելի երկար կյանքով և նվազ սպասարկման ծախսերով:<br><br>4. **Քաղաքաշինական միջավայրի բարելավում**<br>○ Նոր մետաղական հենասյուների և լուսավորության ժամանակակից համակարգերի |

| | |
|---|---|
| | ներդրումը նպաստում է համայնքի ընդհանուր տեսքի բարելավմանը և քաղաքային միջավայրի արդիականացմանը:<br>5. **Սոցիալ-տնտեսական ակտիվության խթանում**<br>○ Լուսավորված փողոցները կարող են խթանել երեկոյան ժամերին փոքր բիզնեսների գործունեությունը, զբոսաշրջիկների ներգրավումը և առհասարակ համայնքի տնտեսական դինամիկան:<br>6. **Բնակիչների գոհունակության բարձրացում**<br>○ Նախագծի իրականացումը կնպաստի համայնքի բնակիչների գոհունակության աճին՝ որպես համայնքային ծառայությունների որակի բարելավման տեսանելի արդյունք:<br>7. **Շրջակա միջավայրի նկատմամբ դրական ազդեցություն**<br>○ Էներգախնայող լամպերի կիրառումը կնպաստի ածխաթթու գազի արտանետումների նվազեցմանը՝ շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից: |
| **Միջոցառման արդյունքների ապահովման նպատակով իրականացվող գործողություններն ու միջոցառումները** | **Միջոցառման արդյունքների ապահովման նպատակով իրականացվող գործողություններն ու միջոցառումները**<br>1. **Նախնական ուսումնասիրություն և նախագծում**<br>○ Գործող տարածքի հետազոտություն՝ լուսավորության պահանջների գնահատման նպատակով:<br>○ Փողոցային լուսավորության նախագծի կազմում՝ համաձայն սահմանված տեխնիկական և անվտանգային չափորոշիչների:<br>2. **Տեխնիկական հստակեցումներ և սարքավորումների ընտրություն**<br>○ Բարձրորակ, 50W հզորությամբ էներգախնայող LED լուսամփոփների ընտրություն՝ լուսավորության արդյունավետության և կայունության ապահովման նպատակով:<br>○ Դիմացկուն մետաղական հենասյուների ընտրություն՝ նախատեսված արտաքին |

օգտագործման և կլիմայական պայմանների դիմակայման համար:

3. **Ինժեներատեխնիկական աշխատանքների իրականացում**
   - Լուսավորության ցանցի տեղադրման աշխատանքներ՝ ընդհանուր 3845 մետր երկարությամբ:
   - 120 միավոր հենասյուների և համապատասխան քանակի LED լամպերի տեղադրում՝ նշված նախագծային տեղակայման կետերում:
   - Լարային ցանցի անցկացում և միացում՝ էլեկտրամատակարարման աղբյուրներին:
4. **Անվտանգության և տեխնիկական ստուգումներ**
   - Տեղադրված համակարգի փորձարկում՝ լուսավորման ուժգնության, էլեկտրական անվտանգության և համակարգի լիարժեք աշխատանքի տեսանկյունից:
   - Անհրաժեշտության դեպքում՝ կարգավորումներ և շտկումներ՝ ըստ մասնագիտական գնահատականների:
5. **Մոնիտորինգ և վերահսկում**
   - Աշխատանքների ընթացքի տեխնիկական վերահսկողություն՝ որակի ապահովման նպատակով:
   - Ծրագրի ավարտից հետո՝ համակարգի գործարկման ընթացքում մոնիտորինգի իրականացում՝ անսարքությունների կամ շեղումների վաղաժամ հայտնաբերման համար:
6. **Բնակչության իրազեկում և ներգրավում**
   - Համայնքի բնակիչների տեղեկացում ծրագրված աշխատանքների, դրանց նպատակների և օգտակարության մասին:
   - Սոցիալական ներգրավման միջոցառումներ՝ բնակիչների կարծիքների և առաջարկների հավաքագրման միջոցով:
7. **Սպասարկման և տեխնիկական աջակցման պլանավորում**
   - Հետագա սպասարկման մեխանիզմների մշակումը՝ լուսավորության համակարգի անխափան և երկարատև գործարկման ապահովման նպատակով:
   - Տեխնիկական անձնակազմի

| | |
|---|---|
| | վերապատրաստում՝ սարքավորումների շահագործման և տեխնիկական սպասարկման հարցերում: |
| Միջոցառման շահառուները | Միջոցառման ուղղակի շահառուներն են համարվում Այրք բնակավայրում մշտական բնակություն հաստատող 150 բնակիչներիը, մոտավորապես 45 տնային տնտեսություն: |
| Ծրագրի կատարման ժամկետները | **26.05.2025-31.12.2025**<br><br>Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը: |
| Ծրագրի հնարավոր ռիսկերը | Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել և իրականացվում են ոռոգման ջրագծերի կառուցման կամ վերակառուցման աշխատանքներ:<br><br>Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը: |
| Միջոցառման հիմքերը | Միջոցառման հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասը:<br><br>ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնահերթությունը տրվում է ազդակիր բնակավայրին:<br><br>Այրք բնակավայրի փողոցային լուսավորության ցանցի անցկացումը առաջնահերթություն է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման 2-րդ հոդվածի 6-րդ կետի ե) ենթակետի: |

| | |
|---|---|
| | Նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 7.956.000 ՀՀ դրամ /կից ներկայացված է իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/:<br><br>Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում: |

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2025 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները

| Հ/Հ | | Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/ | Պետական բյուջե /հազ.դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Վարդենիս համայնքի Այրք բնակավայրի 3845 մետր լուսավորության ցանցի կառուցումն | 7.956.000 ՀՀ դրամ | 7.956.000 ՀՀ դրամ |
| 1.1 | Շինարարական աշխատանք | 7.500.000 ՀՀ դրամ | 7.500.000 ՀՀ դրամ |
| 1.2 | Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում | 300.000 ՀՀ դրամ | 300.000 ՀՀ դրամ |
| 1.3 | Տեխնիկական հսկողություն | 120.000 ՀՀ դրամ | 120.000 ՀՀ դրամ |
| 1.4 | Հեղինակային հսկողություն | 36.000 ՀՀ դրամ | 36.000 ՀՀ դրամ |

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ